

ԵԹ Ի Մ Ի Բ Ա Խ Տ Ը

Ա՛յ իմ սե բախտ, քեզ ինչ արի,
Որ խեղճ օրըս սե՛ արիր.
Կեանքըս տուիր սար ու քարի,
Սիրտըս լացի ծո՛ւկ արիր...

Ես կեանք մըտայ վարդ-յոյսերով,
Յոյսի ճամբով գընացի...
Ճամբէս ծածկուեց չոր փշերով,
Անյո՛յս, անլո՛յս մընացի...

Ես «ջան» ասի, սիրտըս բացի,
Էրված սիրտըս՝ սիրածին.
Երես դարձուց... քնւր-քնւր լացի.
Ականջ չ'արաւ իմ լացին...

Ընկա՛յ սարեր, ընկա՛յ ձորեր,
Յաւ չը մընաց—չը քաշեմ,
Յաւ-հոգսերում, ախ, այսօր էլ
Եթիմ կեանքըս կը մաշեմ...

Այ իմ սև բախտ, քեզ ի՞նչ արի,
Որ խեղճ օրըս սե՛ր արիր.
Կեանքըս տուիր սաղ ու քարի,
Սիրտըս լացի ծնվ արիր...

Ա.Լ. ԾԱՏՈՒՐԵԱՆ
